ՎԱՐԴՈՒՀԻ Շ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԴԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խորհրդանիշն ընկալման համար մատչելի հասկացություն է, որն ունի մտքի, երևակայության օգնությամբ կռահվող իմաստային ներքին աշխարհ, որը շատ ավելի ծավալային է, քան այն բառի իմաստը, որով արտահայտված է խորհրդանիշը: «Պոեզիան առանձնահատուկ լեզվական կառուցվածք է՝ բաղկացած արտաքին և ներքին մակարդակներից,- գրում է Հ. Էդոյանը,- որոնցից առաջինին համապատասխանում է պատկերը (արտաքին աշխարհի արտացոլումը), երկրորդին՝ սիմվոլը, որ գործում է կառուցվածքի մեջ և նշանակում նրա իմաստային ներքին աշխարհը (կառուցվածքի ներքին տարրերի հարաբերությունների համակարգը)[1]:

Կ. Յունգը խորհրդանիշների երեք խումբ է առանձնացնում՝ անհատական, համամարդկային, ազգային: Յուրաքանչյուր անհատի հոգեկանի շրջանակներում գործող խորհրդանիշները համարվում են անհատական: Դրանք իրենց արտահայտությունն են գտնում անհատի երազներում, ցանկություններում, նաև արվեստի ոլորտում և այլուր:

Համամարդկային խորհրդանիշները՝ Յունգի բնորոշմամբ արխետիպերը, մարդկային հիշողության մեջ մնայուն տեղ ունեցող պատկերներ են՝ լեռ, ծով, կրակ, մայր և այլն[2]: Այդ արխետիպերը, ըստ Յունգի, պահպանվում են «կոլեկտիվ անգիտակցականի» ոլորտում, հենց դրանով էլ պայմանավորված է նրանց կայուն բնույթը:

«Յուրաքանչյուր ազգային սիմվոլ իրենից ներկայացնում է ազգի հոգեբանական կերտվածքի մի մասի խտացումը,- գրում է հոգեբան Ա. Նալչաջյանը:- Սիմվոլների համակարգը կարծես իրենից ներկայացնում է ազգային հոգեկանի, հատկապես բնավորության, ***ծածկագրման (կոդավորման) համակարգ***....»[3] (ընդգծումը հեղինակինն է՝ Ա. Ն.): Այդ իսկ պատճառով խորհրդանշական կերպավորումն առավել հարազատ է բանահյուսությանը, որտեղ գեղարվեստական պատկերը միշտ էլ հավաստի, ստույգ մեկնաբանություն ունի: Բոլոր դեպքերում խորհրդանիշն ամփոփում է հսկայական խտացված հոգեբանական տեղեկություն, որը հարմար է գործածության համար թե՛ իր սեղմ պատկերային կաղապարի շնորհիվ, թե՛ գեղագիտական արժեքի տեսակետից:

Շիրազի պոեզիան հարուստ է խորհրդանիշներով: Հ. Սահյանը գտնում է, որ Շիրազի պոեզիան մեզ հանում է ճահճից, որ «Շիրազին հիշելով կարեկցում ենք ինքներս մեզ»[4]: Մ. Փոցխիշվիլին իր հերթին նշում է. «Շիրազը մաքրություն բերող պոետ է»[5]:

---

[1] **Հ. Էդոյան**, Եղիշե Չարենցի պոետիկան, Ե., 1986, էջ 24:

[2] Տե՛ս **Юнг К. Г.**, Об архетипах коллективного бессознательного.- В. Сб.: Юнг К. Г. Божественный ребенок: Аналитическая психология и воспитание. М., 1997, стр. 248-290.

[3] **Ա. Նալչաջյան**, Էթնիկական հոգեբանություն, Ե., 2001, էջ 171:

[4] **Հ. Հովնաթան**, Զրույցներ, Գիրք առաջին, «Վարք», 1992, էջ 51:

Որտեղի՞ց է Շիրազը մաքրության, խղճի, կարեկցանքի, գեղեցկության ու վեհության դասեր քաղում: Ինչպե՞ս է կերպավորում, ինչպիսի՞ բանաստեղծական պատկերներով, խորհրդանիշներով է գեղեցկության ու վեհության իր ընկալումները հաղորդում ընթերցողին: Հր. Հովհաննիսյանը միանգամայն իրավացիորեն Շիրազի՝ միմյանց հետ կապված թեմատիկական «երրորդության» (բնություն-հայրենիք-մարդ) խորհրդանիշներն է համարում գարունը, Մասիսը, մայրը[6]: Այս հիմնային խորհրդանիշների ճառագումներից ծնվում են մի շարք խորհրդանշական հասկացություններ, որոնք ամբողջացնում են շիրազյան մտածողությունը:

Գարունը, որը երիտասարդության, ուժի, գեղեցկության, թարմության, կյանքի խորհրդանիշն է, սերտորեն առնչվում է ***արևի, մանուշակի, ծիծառների, արծվի, երկնքի, ամպի, շանթ ու կայծակի*** խորհրդանշական հասկացություններին, որոնց միջոցով գովերգվում է ոչ միայն բնության զարթոնքը, մշտանորոգ կյանքի ծաղկումը, այլև դրանք դառնում են հասարակական երևույթների գնահատման, արժևորման միավորներ.

Իմ երազի մեջ՝ կանաչ դաշտի մեջ
Կռիվն անցել էր, մաճկալ էի ես,
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Խոփիս տակ ընկավ մանուշակ մի հեզ՝
Կանաչ դաշտի մեջ, դալար դաշտի մեջ
Կարծես թե սիրտս պոկեցին կրծքես[7]*…*

Անհրաժեշտ է առանձնացնել ***գիշերվա*** խորհրդանիշը: «Հայոց դանթեականը» պոեմի բոլոր քսաներկու գլուխների վերնագրերը, առանց բացառության, կապված են գիշերվա սիմվոլիկայի հետ՝ «Առաջին գիշեր», «Գիշեր այգահառաչ», «Գիշեր վշտահուշի», «Սպասմանց գիշեր», «Գողգոթայի գիշեր», «Գիշեր խաչելության» և այլն: Գիշերն ու ***լուսինն*** ուղեկցում են հայոց դժոխքով անցնող ոգեհույլին 8000 տողից բաղկացած ամբողջ պոեմի ընթացքում, և տարածաժամանակային ոչ մի սահմանափակության չենթարկվող կերպարային դիպաշարի կողքին գծագրվում են տիեզերքի ներկայացուցիչների՝ գիշերվա և լուսնի շնչավորված կերպարները: Տիեզերական չափանիշների միջոցով բանաստեղծը շատ կարևոր գեղարվեստական խնդիր է լուծում: Լինելով պոեմի բոլոր գործողությունների ուղեկիցները՝ նրանք դառնում են յուրօրինակ «գործող անձեր», գիշերը՝ որպես անթաղ մի դագաղ, լուսինը՝ որպես Աստծո բաց աչքը, հայոց եղեռնի անխոս վկան[8]:

Շիրազն իր պատկերավոր մտածողության տիեզերամասշտաբ ընդգրկումներով ընդգծում է հայոց ողբերգության չտեղայնացված բնույթը. «Տիեզերքն է դագաղը եղեռնամեռ հայության»: Ուստի ողջ մարդկությունը պիտի դատապարտի անբնական, տիե-

---

[5] Նույն տեղում, էջ 53:

[6] **Հր. Հովհաննիսյան**, Շիրազի ֆենոմենը, «Սովետական գրականություն», 1984, թիվ 3, էջ 107-109:

[7] **Շիրազ**, Երկեր, 5 հատորով, Ե., 1981-1986, հ 1, էջ 115: Այսուհետ հատորը և էջը կնշվեն տեքստում:

[8] **Հ. Շիրազ**, Հայոց դանթեականը, «Խորհրդային գրող», Ե., 1990, էջ 286-287: Այս հրատարակությունից կատարվող հաջորդ հղումների աղբյուրներն այսուհետ կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ նշելով վերնագրի սկզբնատառերը և էջը:

զերքի, երկնային լուսատուների կողմից անընդունելի, աններելի ոճիրը:

Ազգային խորհրդանիշների համակարգը ձևավորվում է աշխարհագրական տեղանունների, ականավոր քաղաքական և ռազմական գործիչների, դիցաբանական կերպարների, ակնառու ներդրում ունեցող մշակույթի գործիչների և գիտնականների անվանումներից, ինչպես նաև սիմվոլացվում են լեզուն, մշակույթի կոթողները, կրոնի հետ առնչվող անձեր, առարկաներ և այլն: Տվյալ ազգի սկզբնավորման և պատմական ու մշակութային զարգացման ընթացքում որպես կարևոր, անփոխարինելի արժեք է ընկալվում այն տարածքը, որտեղ ընթացել է էթնոսի ձևավորումը, կազմավորումը որպես ազգ: Այդ տարածքում աչքի ընկնող և ազգի կյանքում կարևոր նշանակություն ունեցած լեռներ, գետեր, լճեր, հարթավայրեր, քաղաքներ և այլն դառնում են ազգային խորհրդանիշներ: Երբեմն հոգեբանական այնպիսի նույնացում է կատարվում, որ տվյալ ազգի ներկայացուցիչները չեն պատկերացնում իրենց գոյությունն առանց այդ խորհրդանշական աշխարհագրական տարածքների: Այդպիսի խորհրդանշական տարածքների կորուստը, այլ կերպ ասած, «զերված» խորհրդանիշներն ազգի հոգեկանի վրա թողնում են ճնշող, նսեմացուցիչ ազդեցություն: Ստեղծված ոչ նորմալ վիճակի հաղթահարմանը նպաստում են էթնոպաշտպան մեխանիզմները, որոնցից մեկն էլ ազգային խորհրդանիշների վերացումն է, գովերգումը[9]:

Պատմական հայրենիքի վերածնության, կարոտի, ժողովրդի հավերժության արծարծումներում Շիրազը հաճախ դիմում է պատմական կերպար-պատկերներին՝ ***Տիգրան Մեծ, Արա Գեղեցիկ, Մեսրոպ Մաշտոց, Վարդան Մամիկոնյան, Փոքր Մհեր*** և այլն, որոնք հանդես են գալիս իբրև խորհրդանիշներ: Պատկերամտածողության այս կերպը ժողովրդի հավաքական գիտակցության ծնունդն է: Միաժամանակ, ինչպես նկատում է Ս. Արզումանյանը. «Հայոց մեծերի խորհրդանշական-կերպարներով Շիրազը պարզում է աշխարհին, թե որն է մեր ազգային հպարտության հողն ու պատվանդանը, անցյալում ինչեր է արել և այսօր ինչով է ներկայանում բովանդակ մարդկությանը»[10]: Սրանց գումարվում են աշխարհագրական խորհրդանիշները՝ ***Միս ու Մասիս, Վան ու Սևան, Անի ու Արագած, Միփան, Նեմրութ, Արազ, Տղմուտ*** և այլն: Մասունք հիշատակների շարունակական արծարծմամբ բանաստեղծը ժողովրդի կենաց ծառն է սնում, կարոտի ու սիրո խտացում խորհրդանիշներով ժողովրդի դարավոր երազանքը կերպավորում:

Խորհրդանիշների շարքում առանձնանում է ***լեռան*** սիմվոլը: Մարդկության գիտակցության մեջ լեռը համարվել է հոգևոր և մտավոր հասունության խորհրդանիշ, յուրահատուկ մտավոր մակարդակ[11]: Սակայն Հայկական լեռնաշխարհում ապրող մարդու

---

[9] **Ա. Նալչաջյան**, Էթնիկական հոգեբանություն, էջ 167-208:

[10] **Ս. Արզումանյան**, Բանաստեղծության ազգային հողը, «Առերեսում», Ե., 1998, էջ 482:

[11] Աստվածաշնչում Քրիստոսը ճշմարիտ երանությունների տասներկու պատվիրանները լեռան բարձունքից է քարոզում: Շումերա-աքքադական էպոսում՝ «Գիլգամեշ»-ում, գլխավոր հերոսը՝ Գիլգամեշը, հասնում է Մաշու լեռանը (նույնն է Մասիս)՝ Ուտնապիշտիից (բանասիրության մեջ ապացուցված է, որ դա հենց ջրհեղեղյան Նոյն է) իմանալու իրեն հետաքրքրող հարցի պատասխանը կյանքի-մահվան-անմահության մասին: Հատկանշական է նաև էպոսի ենթավերնագիրը՝ «Ամեն բան տեսածի մասին»: Ֆ. Նիցշեի «Բարուց և չարից անդին» գործն ավարտվում է «Բարձր լեռներից» բանաստեղծությամբ, որտեղ

համար իր սարերը մի առանձին օժտվածություն ունեն: Ուժ տալու, զորացնելու, սատար կանգնելու, իր ժողովրդի ցավն ու վիշտը հասկանալու, դեղ ու դարման անելու հատկություններ է վերագրվել նրանց: «Լեռներում ապրող մարդկանց համար,- գրում է Լ. Մկրտչյանը,- լեռները միշտ հենարան են եղել. ազգային բնավորության, ազգային աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում բնությունը»[12]:

Պատահական չէ, որ էպոսում Դավիթն իր վճռական զարկից առաջ մինչև Մարութա սարն է հասնում և ուժ, զորություն ստանում: Հովիվ Սարոն «բարձր սարերին» է վստահում իր սրտի մրմուռը: Լեռնաշատ Հայաստան երկրի համար լեռը վեհության և խաղաղության, խիզախության և ազատատենչ ոգու, հավերժության խորհրդանիշն է.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

(«Էքսպրոմտ» II, 280)

Ստեղծագործությունը գրվել է Հայրենական մեծ պատերազմի սկզբին և շարունակ այն տեսանկյունից է դիտվել, որ խոսում է Խորհրդային Միության քաղաքացին, այլապես փոքրիկ Հայաստանի բանաստեղծը չէր կարող այսպես հաստատ ու համոզված խրոխտանալ: Իհարկե, միշտ էլ նկատվել է, որ դա լեռնաշխարհի մարդու խոսքն է: Ավելացնենք, որ հայ ժողովուրդն իր գոյապայքարի ամբողջ ընթացքում միշտ չէ, որ գտնվել է Խորհրդային Միության նման հզոր տերության կազմում, բայց միշտ էլ նրան ոգեշնչել են իր լեռների վեհությունը, հզորությունը և հավերժությունը: Միշտ էլ իր Դավիթի պես աներեր կանգնել է նա իրենից շատ ու շատ հզոր թշնամու առաջ և զարմացրել օտարին իր վճռականությամբ և ապրելու անսասան հավատով: Այսպես է ահա ձևավորվել հայ մարդու նկարագիրը: Լեռան և հողմի հակադրությամբ բանաստեղծին հաջողվել է ստեղծել հակիրճ ձևի մեջ ամբողջական ու խոսուն, համոզիչ մի պատկեր: Պատահական չէ, որ բանաստեղծն այն պոեմ է կոչել:

Լեռը՝ որպես գեղեցիկի և վեհի խորհրդանիշ, առկա է շատ բանաստեղծություններում («Աբովյանին», «Տիգրան Մեծի վրանները», «Հայ լեռնապարը…» և այլն): Հ. Շիրազի համար Հայաստանի ամեն մի լեռ իր խորհուրդն ունի: Անձնավորված հայոց լեռները նաև զբաղմունք ունեն, բնավորություն, ուրախություն ու վիշտ, կարոտներ ու իղձեր.

Հայաստանի ամեն մի լեռ
Մի քարացած հայ է անմեռ:
Ամեն մի լեռ մի ճգնավոր,
Մի իշխան է, մի թագավոր:
Առնոս լեռը հովիվ է քաջ՝

լեռան խորհրդանիշը վերոհիշյալ իմաստն ունի:

[12] **Լ. Մկրտչյան**, «…Իմանալ զբանս հանճարոյ», «Սովետական գրող», Ե., 1985, էջ 15:

Բլուրների հոտն իր առաջ:
Անդոկ լեռը՝ հայ մարգարե՝
Միրտը՝ կրակ, դեմքը՝ քարե (ՀԴ-5):

Դեռ երկար շարունակվում է սար ու հողի անձնավորումը՝ ստեղծելով կենդանի, շնչող, ապրող, տառապող մի հավաքական կերպար: Նպատակ ունենալով հայ մարդու հոգում կենդանի պահել կորցրած հայրենիքի հուշն ու հիշատակը՝ Շիրազը կենդանություն է հաղորդում այն ամենին, ինչն առնչվում է հայրենիքին՝ մի ամբողջական շունչ ու մարմին դարձնելով հայրենի հողը և նրան ծնած ժողովրդին: Դարերի երթի ընթացքում նրանք զարմանալիորեն նմանվել են, հարազատացել և, բնականաբար, մեկը մյուսի վշտին չի կարող անտարբեր մնալ:

Հայ ժողովուրդն իր սկզբնավորման օրից ապրել է Մասիսի շուրջը, և այն ոչ միայն իր գեղեցկությամբ ու վեհությամբ, այլև որպես հայ ժողովրդի ցավերի ու երազանքների անխոս ուղեկից՝ դարձել է մի տեսակ հավերժության խորհրդանիշ: Հր. Հովհաննիսյանը նկատում է. «Շիրազի մոտ երբեք Արարատը հանդես չի գալիս իբրև պեյզաժի առարկա, իբրև նկարագրության նյութ…. Մասիսը հոգեբանական-բարոյական, ազգային-պատմական երևույթ է: Պատմություն, ժողովուրդ, հայրենիք, ճակատագիր և ըղձանք: Մասիսի խորհրդանիշը իրենից չորս կողմ արձակում է հույզի վիթխարի ճաճանչներ, և նրանց մի մասը գնում սուզվում է դարերի խորքը, մի մասն այրում է այսօրվա ապրողներին, մյուսը՝ սլանում դեպի գալիք: Բանաստեղծի՝ Մասիսի շուրջը պտտվող միտքը իր բոլոր թռիչքների ու զեղումների մեջ ստեղծում է ***հայրենիքի պաշտամունքը***»[13] (ընդգծումը հեղինակինն է՝ Հր. Հ.): Նկատի ունենանք, որ Արարատը նաև բիբլիական լեռ է. համաշխարհային ջրհեղեղից մարդկությունը փրկվեց՝ ապավինելով Արարատին: Ամրորեն նստած մայր հողին, հողից ծնված, հողից բարձրացած, հողի հետ միաձույլ ինչպես ժողովուրդը՝ նա դարձել է իր ժողովրդի կեցության չափանիշը.

Կուզեի նստել մի քարի վրա
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին (I, 196):

Ուկրաինացի բանաստեղծ Իվան Դրաչն այսպես է մեկնաբանում Մասիսի խորհուրդը. «Դա սրբազան լեռ է ամեն մի հայի համար. հայ ժողովրդի պատմական ճակատագրի համր վկան՝ պարուրված լեգենդներով ու առասպելներով, այն իր մեջ մարմնավորում է հայրենիքի կերպարը: Ճերմակաթույր հսկայի հավերժական ձյունը արևի նման լուսավորում է հայոց հողը, և յուրաքանչյուրը փոխադարձում է նրան այդ լույսը, որի մեջ կա և՛ հիացում նրա առջև, և՛ հավատարմության երդում հայրենի հողին»[14]: Բնության հետ միաձույլ, հողի ձայնին ունկնդիր… Սա է Շիրազ մարդն ու բանաստեղծը: Ահա և այս զգացողության բանաստեղծական արտահայտությունը.

Ես Մասիս կասեմ, հասկացիր հորս,
Հասկացիր, ազգ իմ, այն սար ու ձորս,

---

[13] **Հր. Հովհաննիսյան**, Շիրազի ֆենոմենը, «Սովետական գրականություն», 1984, թիվ 3, էջ 107-109:

[14] **Ի. Դրաչ**, Մոտեցում Պարույր Սևակին, «Գրական թերթ», 1983, թիվ 27:

Որ շղթայի մեջ
Արծիվ են դեռ խեղճ,
Հասկացիր խլված քո հողն ու հանդը,
Հորս մայր Անին, մորս Վանանդը,
Մեզ հայ մկրտած մայր Արածանին…. (I, 201):

Իր չափածոյում Շիրազը հետևողականորեն ցանկացել է գեղարվեստականացնել հայոց հողն ու հայրենին, որի համար հաճախ մեղադրվել է ինքն իրեն կրկնելու, պատմական անունները շահարկելու, կեղծ հայրենասիրությամբ երիտասարդությանն ապակողմնորոշելու մեջ: Սակայն ինչպես նշում է Պ. Սևակը. «….Կան կրկնություններ, որոնք նման են մեխի. մի քանի հատ է պետք, որ մեխվելիքը ոչ միայն վայր չընկնի, այլև մնա ընդմիշտ»[15]: Իր սփյուռքահայ բարեկամին գրած նամակներից մեկում Շիրազը գրում է. «….Ատում եմ կեղծ հայրենասիրություն կոչվածը, ուզում են խոսել ողջ հայության հետ, որ միանան, իրար սիրեն, պաշտեն իրար, համախմբվելով չարակամ ազգերի աչքը հանեն, եղեռնագործին սպանեն հայոց ծաղկումով, հայոց ծննդատների բազմաբյուրապատկումով, սուրբ ընտանիքների նահապետական սրբությունների էլ ավելի ամրապնդումով, աշխարհի բոլոր մոլոր հայության տուն գալով, Մասիսի շուրջը հայ ազգով ոսկե գոտի կապելով… Այս է իմ գաղափարական ողնաշարի միջի ծուծը, ծուծի ծուծը…. որ հայ ազգն իրավ հավերժանա…»[16]: Շարունակ հոլովելով մեր պատմական անունները՝ նա ձգտում էր սրբել մոռացության փոշին, վառ պահել պատմական հիշողությունը, ազատագրական պայքարի գաղափարը, կորուսյալ հայրենիքը վերագտնելու հույսը, ամրապնդել ազգայինը, որը նաև համամարդկային է.

Իմ քնարը լոկ Մասիս չէ, բյուր են լարերն իմ քնարի,-
Ցավն եմ լալիս ողջ մարդկության՝ երբ իմ հայոց ցավն եմ լալիս (I, 330):

Ոգեղենացած Արարատը դառնում է Շիրազի հայրենական նվագների առանցքը, ազգային գոյության ներքին բովանդակությունը. «Թե չձուլվեմ Արարատին ես կմեռնեմ կարոտից» («Վերջին իրձս» I, 163): Հայրենի կորցրած եզերքի կարոտը, ծնված անսահման սիրուց, հնչում է բնական, անսեթևեթ, ինքնաբուխ: Անհուն, անսահման կարոտի ու սիրո մորմոքը հույսը դարձնում է իրական, շոշափելի.

Ինձ էլ բերեք այն սուրբ ձյունից՝ իմ հուշերի արցունքով,
Երբ կազատեք՝ լուրն ինձ բերեք ոչ թմբուկով, ոչ շուքով,
Քանզի սիրտս շատ է մաշվել Արարատի կարոտից,-
Որ չմեռնեմ խնդությունից՝ լուրն ինձ բերեք… շշուկով (I, 311):

Սերն ու կարոտը դառնում են կտակ.

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան («Կտակ», I, 100):

Դառնում են պատգամ.

Իրձս առաջին

---

[15] **Պ. Սևակ**, Երկերի ժողովածու, վեց հատորով, «Հայաստան», Ե., 1974, էջ 228:

[16] **Խ. Բարսեղյան**, Շիրազ, «Արևիկ», Ե., 1990, էջ 223-224:

Եվ իղձս վերջին՝
Ինձ թաղեք միայն
Մասիսի լանջին («Կտակ վերջին», I, 196):

Կորցրած հայրենիքի ազատագրման իղձը, փափագը բանաստեղծին մղում են ինքնանվիրման, ինքնազոհողության.

Օ՜, չէ, նա է ազգիս ճամփան քարերն ի վեր, ի վեր Մասիս,
Թող ամպ ու շանթ գլխիս ոռնան սարերն ի վեր, ի վեր Մասիս,
Կտանեմ սիրտս վիրավոր, որպես դրոշ, Մասիսն ի վեր,-
Թեկուզ մահով՝ կբարձրանամ դարերն ի վեր, ի վեր Մասիս…
(«Արարատին», I, 195)

Մեր ազգային կարևորագույն խորհրդանիշներից են իրար սերտորեն շաղկապված ***լեզուն, այբուբենը, Մեսրոպ Մաշտոցը***: Մեկ ժողովրդի մշակութային գործիք հանդիսացող մեր ազգային այբուբենը, ինչպես նաև հայ պատմության դժվարագույն պահերից մեկում ստեղծված այդ այբուբենի՝ որպես աստվածատուր գրերի պատմությունը բավարար հիմք են, որպեսզի հայկական այբուբենին ճակատագրական դեր վերագրվեր հայ ժողովրդի կյանքում[17]: Մեզանում լեզվի ազգապահպան դերը գիտակցվել է դեռևս V դարում: Մաշտոցն ու իր զինակիցներն անձնազոհաբար նվիրվել են այդ գործին, ստեղծել գիր ու գրականություն, որը հետագա բոլոր դարերում դարձել է հայ ժողովրդի նեցուկը, նրա լինելիության խորհրդանիշը: Մաշտոցի անձն ու գործը սրբացվել է, անգամ հայ եկեղեցին նրան դասել է սրբերի շարքը: Նրա աշակերտների՝ Կորյունի և Խորենացու սկսած գործն արձագանք գտավ հետագա սերունդների մոտ: Այն իր արտահայտությունն ունեցավ արվեստի զանազան ձևերում: Նոր գրականության մեջ Մաշտոցի կերպարին անդրադարձան Մ. Նալբանդյանը «Օշական», «Ուխտագնացություն դեպի Օշական», «Սուրբ Մեսրովբի տոնին» բանաստեղծություններով, Սիամանթոն «Սուրբ Մեսրոպ» պոեմով, որը գրվեց 1912 թ. Հ. Թումանյանի գլխավորած Հայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայոց տպագրության 400-ամյակի առթիվ:

Շիրազը խորապես գիտակցում էր լեզվի ազգապահպան նշանակությունը, ժողովրդի պատմական ճակատագրի մեջ առաջնային դեր էր վերապահում լեզվին: Նա 1962 թ. Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին գրեց «Հայոց հրաշքը. Մեսրոպ Մաշտոց» պոեմը: Պ. Սևակը «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը ևս գրեց այդ առթիվ, ինչպես նաև հանդես եկավ հոդվածներով և զեկուցումով: Երկու մեծ բանաստեղծների ոգեշնչումը միայն հոբելյանական տոնի առթիվ մեծ գյուտարարին և քաղաքական գործչին տրված տուրք չէր: Նրանք նորովի զգացին մաշտոցյան գործի վիթխարի արժեքն ու արդիական նշանակությունը, քանի որ ստեղծված քաղաքական և սոցիալական իրավիճակը հիշեցնում էր հայոց լեզուն փրկելու համար գիր ստեղծելու անհրաժեշտության մաշտոցյան ժամանակները[18]: Լեզվի նկատմանբ տագնապն ու անհանգստությունն առկա էր մեր մյուս բանաստեղծների մոտ ևս: Հիշենք Ն. Զարյանի «Ինչո՞ւ չես խոսում հայերեն», Ս. Կա-

[17] **Ա. Եղիազարյան**, Մեսրոպ Մաշտոցի կերպարը հայ գրականության մեջ, «Գրականագիտական հանդես», 2005, Բ(դ), էջ 3:

[18] **Ս. Մուրադյան**, Գրական հանգրվաններ, Գիրք առաջին, ԵՀՀ, Ե., էջ 412:

պուտիկյանի «Խոսք իմ որդուն», Պ. Սևակի «Խոսք հավաստիքի» և այլ բանաստեղծություններ:

Մաշտոցի կերպարի գեղարվեստականացմանը նվիրված երեք պոեմներում էլ առկա է «Օշականի սուրբ ննջեցյալի» (Շիրազ) վաստակի գիտակցումը, արժևորումը և խոնարհումը նրա մեծ գործի առջև: Սիամանթոն նարեկացիական աղոթքի ոճով ու ոգով է դիմում Մաշտոցին: Սևակը, Մաշտոցի կերպարը քննելով հայ ճակատագրի վրա ունեցած նրա դերի տեսանկյունից, ժառանգության իմաստով բարձր է դասում մեր բոլոր թագավորներից ու զորավարներից, քանի որ նա մեզ թողեց դպրություն, որը եղավ մեր հոգևոր փրկության խարիսխը՝ չնայած մեր հողային և նյութական կորուստներին: Շիրազի պոեզիայում այբուբենը համարվում է բազում կռիվներում թրծված հայոց մատյան գունդը, իսկ «զորաստեղծ», «Այբբենաթուր զորավարն» արժանի է Մասիսի պատվանդանով հուշարձանի: Հանուն ներկայի և ապագայի՝ «ազգապաշտ» ուսուցչի անձի և գործի ոգեկոչումը բանաստեղծին մղում է երդում-հավաստիացման.

Ավարայրի դաշտն է հրկեզ՝
Գրասեղանն իմ լռին,
Դաշտ եմ խուժել Վարդանի պես՝
Թուր-կայծակին իմ ձեռին…
Դուրս չեմ գալու՝ Վարդանի պես
Ես կգոհվեմ այս դաշտում,
Որ չդիպչեն հայոց լեզվին
Ժամանակներն անկշտում… (II, 175):

Շիրազն իր «Խոսք՝ մեծախորհուրդ պատգամի», «Ուղերձ իղձերիս», «Հայոց լեզու», «Քառյակներ լեզվապատումի» և այլ գործերում գեղարվեստական բազմազան միջոցներով ազգային հոգեբանության և ոգու մահաբեր թմբիրի տարիներին հետևողականորեն հնչեցնում է լեզվի՝ մեր ազգի հոգեկան կերտվածքի անտրոհելի մասը լինելու փաստը և դառնում նրա հարատևության պատգամախոսը. «Մասիս պահեք հայոց լեզուն» (IV, 45): Առասպելական Թուր Կայծակին, որը ևս մեր ազգային խորհրդանիշներից է, դառնում է լեզվի զորության համեմատության առարկան՝ պատկերավոր ցույց տալով լեզվի իրեղեն, նաև առասպելական, ոգեղեն զորությունը.

Հայոց լեզուն՝ թուրն է հայոց,
Թուր կայծակին՝ ընդդեմ վայոց» (ՀԴ-9):

Ազգային խորհրդանիշների զուգորդումներով Շիրազն ընդլայնում, խորացնում է խորհրդանիշների գաղափարական և հոգեբանական ծավալները: Լեզուն՝ որպես մեր ժողովրդի լինելիության գրավական, հրաշալի մարմնավորված է հայոց պատմության գեղարվեստականացված մի դրվագում: Դեր Զորի անապատում ավազի վրա հայ մայրն իր մանկանը սովորեցնում է մաշտոցյան գրերը: Սակայն անապատային քամին, որպես թուր-սամում, ջնջում է հայոց ազգապահ գրերը: Մոր և «հողմածնունդ» քամու պայքարում հաղթում է մայրը, քանի որ նրան սատարում էր Մաշտոցի ոգին.

Ահա՛ ձեզ, մարդի՛կ, հայոց պատմությունն ամենաշքեղ.
Մայրը ցույց տալիս՝ գրում էր որդին մահից էլ համառ,
Գրում էր որդին… թեկուզ յաթաղան-սամումն ինքը գար… (ՀԴ-331):

Չնայած լեզվի և ազգի պահպանության ու միասնության գաղափարը Շիրազի չափածոյի գլխավոր հունն է, և նա այդ մասին գրում էր բացեիբաց, բայց հետաքրքիր է, որ երբեմն էլ ծածկագրված էր հայտնում իր մտքերը: Գաղտնի ասված խոսքը միշտ ավելի ուշադրության է արժանանում, քան բարձրաձայնվածը: Թվում է՝ հենց դա է պատճառը, որ բանաստեղծը հաճախ դիմում է աքրոստիկոսի գեղարվեստական հնարանքին: «Խոսք՝ մեծախորհուրդ պատգամի» բանաստեղծության մեջ, որը նվիրված է Երևանի 2750-ամյակին, հեղինակը շեփորում է. «Միակ զորքդ լեզուդ է սուրբ», իսկ բանաստեղծության առաջին բառերով կարդում ենք ծածկագիրը. «Ով հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հայ լեզվի փրկության մեջ է»: Սա Չարենցի, որին Շիրազը համարում էր իր «բանաստեղծական կուռքը»[19], «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Պատգամ» բանաստեղծության երկրորդ տառերի վերից վար իջնող շղթայակապով (ակրոստիքոսով) գրված «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» պատգամի՝ ժամանակի ոգուն համահունչ շիրազյան վերաձևումն է: Գաղտնիքները վստահվում են մտերիմներին, հարազատներին, այդ իսկ պատճառով ավելի թանկ են, ուշադրություն գրավող: Հենց դա էլ Շիրազի նպատակն է. ժողովրդի ուշադրությունը բևեռել ազգապահպան պատգամներին, և դա նրան հաջողվել է:

Անապական մաքրության, ներքին գեղեցկության անսպառ պաշարներ ունի ***մայրը***: Այդ իսկ պատճառով Շիրազը մոր կերպարը դարձրել է բարձր բարոյականության, անաղարտության, մարդկայնության խորհրդանիշ, որն անգամ սրբացվում է.

Միայն մայրն է մնացել սուրբ Արարատ….
Ա՜խ, լոկ մայրն է սուրբ ու վեհ («Նախերգ», IV, 6):

Մայրն այն սրբասուրբ էակն է, որը մարդկության շեղված ընթացքը պետք է ուղղի դեպի բնականոն հուն, որպեսզի մաքրվեն, «մայրանան կյանք ու կին»: Մայրը նպաստում է մարդու մեջ բարձր հատկանիշների զարգացմանը, որը գեղեցիկի կարևորագույն հատկությունն է: Մայր սրբությունը հասնում է մինչև աստվածային բարձունքները: Բոլորովին անզարդ, պարզ, անմիջական, իրական, շոշափելիորեն իրական պատկերներով բանաստեղծն ասես վրձնում է մոր կերպարը.

Մայրս, մեր հացն է մայրս,
Մեր տան աստվածն է մայրս… (IV, 19):

Մայրը նույնանում է մայր հայրենիքի հետ. «Չգիտեմ մա՞յրս է Հայրենիքս անգին, // Թե՞ Հայրենիքս է մայրս կաթոգին» (IV, 116): Հետաքրքրական է սեփական մորն ազգային խորհրդանիշների շարքին դասելու գործընթացը: Շիրազի համար իր մայրը խղճի, բարոյականության մարմնացում է և կարող է նախապես ընկալվել որպես անհատական խորհրդանիշ, քանի որ նույն այդ մայրն ուրիշների համար համանման նշանակություն չի ունեցել: Սակայն սեփական մայրը զուգահեռվում է արդեն գոյություն ունեցող ազգային խորհրդանշական հասկացություններին՝ Արարատին, հայրենիքին, վերջինս իր հերթին Շիրազից շատ ու շատ առաջ կապվել է արդեն եղած արխետիպին, միաժամանակ նաև ազգային խորհրդանիշին՝ մորը. «Մայրս պատկերն է մայր հայրենիքիս» (IV, 24): Նոր խորհրդանիշը հագեցվում է արդեն գոյություն ունեցող խորհրդա-

[19] **Խ. Բարսեղյան**, Շիրազ, էջ 107:

նիշի հոգեբանական բովանդակությամբ և ինքն էլ դառնում խորհրդանիշ: Մայրը ձուլվում է մայր հայրենիքի ազգային ընկալումներին, հարստանում և հարստացնում այդ խորհրդանշական հասկացության զգացմունքային և բովանդակային կողմերը: Նա հումանիստական անչափելի պաշարներով ընկալվում է որպես գոյության բարձունք, կեցության չափանիշ.

….Մայր՝ դու օրոցք հավերժության,
….Դու աշխարհին՝ խղճի մերան,(IV, 141):

Փոքրիկ, հասարակ մայրը, բարձրացած աստվածային բարձունքներ, ճրագ ու լույս դարձած ցրում է մարդկային սրտի և մտքի մռայլը, լուսավորում մարդկության ուղին.

….Մայրս՝ մի բուռ սրտիս մեջ՝
Գիշեր ու զօր արեգակ (IV, 10):

Զ. Ավետիսյանը նկատում է. «Մենք չենք կարող առանձնացնել, օրինակ, գեղեցիկը, վեհը, ներդաշնակը, վսեմը որպես ինքնուրույն իդեալական որակ, որովհետև գեղեցիկը ինքը իրենով չի ավարտվում, այդ գեղեցիկը նաև ներդաշնակ է, վսեմ և այլն»[20]:

Գեղեցիկը, որը օգնում է մարդուն հոգեպես բարձրանալու, մոր կերպարում ներդաշնակվում է վեհի հասկացության հետ, քանի որ մայրը մարդկության վշտի և չարչարանքի կրողն է, մարդկային ցավի թանձրացումը: Այդ տեսակետից հատկանշական է «Բիբլիական» պոեմը, որի բնաբանում ներկայանում է մայրը, որն էլ, որպես հոգեպես զորեղ մարդ, կարողանում է տանել մարդկային վշտի ծովը և դառնում է «աստվածություն՝ խիղճ ու արցունքի…» (IV, 17): Հոգևոր և ֆիզիկական ուժերի հերոսական լարումը, անձնազոհությունը մոր կերպարին վեհություն են հաղորդում.

Դարդս տվի հովերին՝ հովերը չառան,
Դարդս տվի ծովերին՝ ծովերը չառան:
….Մայրս առավ ու հալվեց, ու մի բուռ դառավ… (IV, 50):

Մայրը՝ որպես խորհրդանիշ, համեմատվում է բազմազան արխետիպերի հետ (արեգակ, Աստված, ծով, հով), հագեցվում հոգեբանական նորանոր լիցքերով, այդ բովանդակային հոսքն ընդգծում է մայր խորհրդանիշի վեհությունը, որը համապատասխանաբար վեհ խոհեր է արթնացնում, բարության ու նվիրաբերման ցանկություն արթնացնում.

Մայրս ծերության ձորերն է իջնում,
….Երթամ սարերը իմ բույն Շիրակի,
Ալագյազ իջնեմ կռունկից առաջ,
Երթամ սարերը՝ ձյուն-ձնծաղիկի,
Ձորերը բերեմ գարունը կանաչ (IV, 61):

«Հուշարձան մայրիկիս» պոեմն (հեղինակը այն պոեմ է կոչել) առանձնանում է մարդկայնության ինքնօրինակ խտացումներով, որոնք նույնիսկ գեղեցկությամբ ու վեհությամբ տաճարվում են, դառնում գմբեթ ու սյուն, մոմ ու կերոն, խունկ ու մեռոն.

Ձեռակերտն է մայրս աստծո հանճարի,
Մայրս դրսից վանք մի խեղճ,
Իր գլուխն է նուրբ գմբեթը տաճարի,

[20] **Զ. Ավետիսյան**, Գեղարվեստական մտածողության հետքերով, «Սովետական գրող», Ե., 1985, էջ 10:

Խաչը ներսն է՝ սրտի մեջ:
….Բուրվառի պես աղոթքները շաղ տալով,
Հազար չարի դեմ առած,
Վառվում էր լուռ՝ բուրվառի պես ծխալով,
Մայրս՝ խունկ ու մոմ դառած:

(«Մայր տաճարը», IV, 131)

Սրբության այդ տաճարը, սիրո ընդգրկման տիեզերական անսահմանությամբ, արժանի է համընդհանուր պաշտամունքի.

Անցո՛ղդ, խոնարհի՛ր
Գլուխը քո սեգ.
Այստեղ հանգչում է
Մի բուռ տիեզերք (IV, 124):

Մարդերգության յուրօրինակ հուշարձան է նաև «Հուշարձան հայրիկիս» պոեմը՝ հյուսված բանաստեղծություններից: Այստեղ հոր խորհրդանշական կերպարը միահյուսվում է Հայկական լեռնաշխարհի էպիկական վեհությանը՝ առնական ու գեղեցիկ, կենդանի, իրական, լուսավոր, կարծես իր հետ բերում է Շիրակի հովերի շրշյունը, հողի ու գարնան բույրն ու գույնը: Բնության, հայրենիքի, մոր, հոր, զավակների սերն ու կարոտը միահյուսվում են, վերաճում համամարդկային սիրո, նվիրաբերումի:

Ծովը Շիրազի լեզվամտածողության հիմնական բաղկացուցիչ մասերից է, խորհրդանիշ: Ջրային տարերքը՝ որպես հղացման նախասկիզբ, ուժի, զորության ակունք, առկա է շատ ժողովուրդների մոտ, նաև մեր էպոսում[21]: Հեքիաթներում անհամար փորձություններ են հաղթահարվում՝ անմահական ջուրը բերելու և մարդկային կյանքը փրկելու համար, ջուրն ընկալվում է կյանքի աղբյուր: Ծով չունեցող երկրում լճին ծով կոչելը ենթագիտակցորեն հավանաբար պայմանավորված է հենց այդ կենսականությանը հարաբերվելու ձգտումով.

Վանա ծովը, Վանա ծովը՝ գրկում Սիփան սարերի՝
Թագուհին է, մայրն է հայոց Վասպուրական աշխարհի:
Ու թագավոր իր Սիփանից երբ արևը բարձրացավ,
Վանա ծովակն հույսի, լույսի ու փիրուզի ծով դարձավ…. (III, 200):

Հայ իրականության մեջ ծովը շարունակ գործածվել է «ծովից ծով Հայաստան» կա-

---

[21] Իրանական մի առասպելում, որ ձևավորվել է զրադաշտական կրոնի սուրբ գրքի՝ «Ավեստայի» հիման վրա, պատմվում է Զրադաշտի՝ ծովում պահպանված սերմի և կույսի զուգավորումից ծնվածի մասին: Տե՛ս **Ս. Հարությունյան**, «Հայ առասպելաբանություն», Բեյրութ, 2000, էջ 464: Նարթական էպոսում Սաթանայի մայրը՝ Ձերասան, ծովում ամուսնանում է նարթերի դյուցազնի՝ Ախսարթագի հետ և լույս աշխարհ բերում Վրրըզմագ և Խամըց երկվորյակներին: Տե՛ս **Տ. Դալալյան**, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ, ՊԲՀ, 2002, թիվ 2, էջ 195: Հունական առասպելական Ալոադները սաղմնավորվում են, երբ նրանց մայրը ծովի ջուր էր թափել հագուստի փեշին: Տե՛ս **Ա. Պետրոսյան**, «Հայկական էպոսի հնագույն ակունքները», Ե., 1997, էջ 23: Ըստ միջնադարյան ձեռագրերից մեկի՝ հայոց Աստղիկ դիցուհին ևս ծնվել է ծովից (Ծովինարից): Արամազդը, մենամարտելով իր երկվորյակ եղբոր հետ, սպանում է նրան ու նետում ծովը: Արյունով ներկված ալեկոծ ծովի փրփուրներից ծնվում է Աստղիկը, որի ամեն քայի հետ ոտքից կաթկթացող արյունը փոխվում է վարդերի: Տե՛ս **Ռ. Համբարձումյան**, Հայկական տոմար, Ե., 1992, էջ 15:

պակցության մեջ և դարձել է մի տեսակ մեր ազգային և տարածքային ամբողջականության խորհրդանիշ: Շիրազյան մտածողության մեջ միևնույն ժամանակ «Ծովը ազատություն է, համբերություն, որ մենք չունենք…»[22].

Լալիս է ծովը՝ ժեռ վանդակն ընկած,
Ծովն աչքիս առաջ և իմ աչքի մեջ.
Ափերն է կրծում ծովը մոլեգնած,
Ծովն հույսիս առաջ և իմ սրտի մեջ.
Ու ծառս է լինում՝ ամենքից խաբված,
Իմ սիրո ծովը՝ իմ ծով խանդի մեջ… (III, 57):

Ծովը կյանք է, կյանք՝ մշտական պայքարի, ըմբոստության. «Ծովեր՝ տարերքը մշտըմբոստության» (Ե1-108): Պատահական չէ բանաստեղծի դիպուկ համեմատությունն իր անձի, ստեղծագործության և ծովային տարերքի միջև:

Ծովի նման, ափերիս մեջ
Գնում-գալիս եմ ես անվերջ,
Ծովի նման միշտ նույն տեղում՝
Կարոտից է ծովս դողում,-
Ծառս եմ լինում ծովի նման
Կատաղությամբ իմ անսահման,
….Կուզեմ փշրել ծովի նման,
Ողջ ափերի ժեռն անսահման… (I, 131):

Ծովը շիրազյան պատկերային համակարգը ձևավորող միավոր է և հաճախ հանդես է գալիս նաև փոխաբերական կիրառությամբ. «Լուսինը կորավ գիշերվա ծովում» (I, 136), «Սիրտս հուր սիրո կրակ է, ծովե՛ր, // Սրտիս կրակը լոկ դուք կմարեք» (III, 51):

Այսպիսով՝ պատկերային խորհրդանիշները կարևոր իմաստային դեր ունեն Շիրազի պոեզիայում, քանի որ ստեղծում են զարդանախշային հարազատ մթնոլորտ և դառնում ազգային մտածողության և հոգեբանության ինքնատիպության մի օղակը: Գեղեցկությունը և վեհությունը նպաստում են մարդու հոգևոր մաքրությանը, հոգևոր վերելքին: Հ. Շիրազի պոեզիան ծառայում է հենց այս նպատակին: Բարության, գեղեցկության, մարդասիրության, կատարելության զգացողության մեկնարկը բանաստեղծի համար առաջին հերթին մայր բնությունն է, հայրենի բնաշխարհը՝ իր վեհ լեռներով, հորդահոս գետերով, ծառ ու ծաղկով, Արարատով, որը ներկայացվում է և՛ որպես ժողովրդի հավերժության խորհրդանիշ, և՛ նրա անլուր ողբերգության կենդանի վկա, և՛ արդար պահանջատիրության ղողանջ, և՛ ահեղ դատաստանի ահազանգ, և՛ հայության միավորման, հայրենիքի աներեր ուժի խորհրդանիշ, և՛ իմաստուն հսկա նահապետ, որը վեհ խոհեր է արթնացրել այդ բնության մեջ դարեր արարող իր ստեղծագործ ժողովրդի մոտ: Հայրենի բնաշխարհը, մայր բնությունն իր մարդկային կերպավորումն ստանում է մոր, հոր սրբազան կերպարներով, որոնք էլ խտացնում են մարդկայնորեն գեղեցիկի ու բարու, խղճի, գթասրտության, կատարյալի բանաստեղծի իդեալը:

[22] **Գ. Արշակյան**, Հոգով խելառը, էջ 270: